Կազմված է 01.03.2021թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է 3 օրինակից
Օրինակ 3
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարի 2021 թվականի
փետրվարի 26-ի N 246-Ա/2 հրամանով

_____Վ. Դումանյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի կողմից 16.01.2008թ.
Գրանցման թիվ 46.210.00102
ՀՎՀՀ 05807731
01.02.2021թ. գրանցված կանոնադրության թիվ 2-3
փոփոխությունը գրանցվել է
Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
22.03.2021թ.
Դ. Մկրտչյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԱՄԱՍԻԱՅԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ)

1) 23-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«3) 2-ի թեկնածությունը ուսումնարանի մանկավարժական կազմից լիազորված մարմնին ներկայացնում է տնօրենը, որոնց թեկնածությունն առաջադրվում է ուսումնարանի մանկավարժական խորհրդի կողմից սահմանված ընթացակարգի համաձայն.

4) 3-ի թեկնածությունը ուսումնարանի ուսանողների կազմից լիազորված մարմնին ներկայացնում է տնօրենը, որոնց թեկնածությունն առաջադրվում է ուսումնարանի ուսանողական խորհրդի կողմից սահմանված ընթացակարգի համաձայն:»,

2) 33-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«33. Խորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքում այն համալրվում է սույն կանոնադրության 22-րդ և 23-րդ կետերի պահանջներին համապատասխան: Թափուր տեղ առաջանալուց հետո տնօրենը տասնօրյա ժամկետում Լիազոր մարմնին է ներկայացնում համապատասխան տեղեկատվություն և/կամ առաջարկություն:»,

3) 66-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«66. Ուսումնարանն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:»,

4) 66-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 66.1-ին կետով.

«66.1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն ուսումնարաններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների

վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես ուսումնարաններին իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան ուսումնարաններին փոխանցելու համար:»:

Սույն փոփոխությունները և լրացումը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված (գրանցման համար 46.210.00102) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Ամասիայի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը: